ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«16» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

«ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման նպատակով «ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգում մուտքագրվել (լրացվել) են առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, մոդելը (այսուհետ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր):

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված փաստաթղթերի ոչնչացման սարքի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «կուտակիչի ծավալը՝ **15-20լ**», սակայն «ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է՝ «կուտակիչի ծավալը՝ **23լ**»:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող փաստաթղթերի ոչնչացման սարքի բնութագիրը չի համապատասխանում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա,

- մյուս մասնակիցների՝ ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ-ի, «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի, «ԱՐԴՄՈՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի, «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ի, Արամայիս Եպիսկոպոսյան Ա/Ձ-ի, Լայթսպորտ ՍՊԸ-ի, ՏՆՄ ՍՊԸ-ի, «ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Անդրանիկ Աբգարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան